## 31. ՁԱՐԵՔԴԱՐԻ ՎԱՆՔ

*Գտնվում է համանուն գյուղում, Վաղուհասից մոտ 10 կմ հեռու, Թարթառ գետի աջ ափի մի բարձրանիստ բլրի գագաթին։*

*Վանքի շինությունները կիսավեր են. կանգնած են իրար կից չորս շենքեր՝ եկեղեցի, գավիթ, տապանատուն և մատուռ՝ անտաշ քարերով շինված։*

*Այս վանքի հին անունը չի պահպանվել. արձանագրություններից հայտնի է դառնում, որ եկեղեցին կոչվել է ս. Աստուածածին։*

*Վանքի անվան վերաբերյալ Ջալալյանցը մտցրել է մի սխալմունք, որը կրկնել է և Բարխուդարյանցը։ Տեր-Մովսիսյանը իրավացի հարցնում է, թե որտեղի՞ց Ջալալյանցն ու Բարխուդարյանցը Մշահան անունով են կնքել այս վանքը*[1]*։ Ջալալյանցի հորինած անունը առաջացել է թերի արձանագրությունների մեջ ինքնակամ հավելումներ անելու և ամբողջական իմաստ ստանալու համար որոշ գրեր ջնջելու սովորությունից։ Այսպես, մեզ մոտ այս վանքի առաջին արձանագրության երկրորդ տողի սկզբից պակասավոր մասում լրացնում է* իշխան եկի *բառերով. ապա պարզ երևացող* իմ *բառի* ի *տառը համարում է նախդիր, իսկ* մ *տառը միացնելով հաջորդին՝ կարդում է* Մշահան*. Բայց քանի որ այդ բառի մեջ կա դ տառը, այն ջնջում է և հաջորդը կարդում* ուխտ*. այսպիսով,* իմ Շահանդուխտ *բառերից հորինվում է* Մշահան ուխտ*։*

*Այս վանքից ներկա ժողովածուն պարունակում է 11 արձանագրություն, որոնցից 2-ը հրատարակվում են առաջին անգամ։*

***443. ԽԱՉՔԱՐ**, մեծ և գեղաքանդակ, ագուցված է եկեղեցու հյուսիսային պատի մեջ ներքուստ. ստորին մասում թերի 9 տող.*

··· ԷՐԹ Ի Ի.Ն։ԵՍՍԵՒԱԴԱ
··· ԻՄՇԱՀԱՆԴՈՒԽՏԿԱՆԳՆԵՑ
··· ԽԱՉՍԻՏԱՊԱՆԻԳՐԻԳՈՐԱԻՇ
··· ՆՈՐԴՈՅՆՀԶԱԻՐԵԽՅԱՂԹՈՂԻՇ ··· ԵՑԱԻԳՐԻ
··· ՈՐԲԱԶՈՒՄՔԱՋՈՒԹԵԲԵՀԱՐՉՏԱ ··· ԵՐԿԻՐ
··· ՔԵԻԵՐԹԷՐՅԵՏՋՈՐԳԻՏԱՑԻՆՎ ··· ՆԷՔՅԱ
··· ՔԵԻՉ ԹՈՂԻՆՎԱՆՑԴԵԴԱՆԲԵՐԴՈ ··· ԼՅԻՇԵՑ
··· ՍԱՄԷՐԵԻՄԵԾՊԱՏԵՐԱԶՄՈՐԱՆԿԱԻ ··· ԳՈՐԵՉ
···· ՌՅԿ։ՏԱՃԻԿ։ԵԻ ԱՆԴՐՆԱՀ ··· Կ

··· ԷՐ ԹԻԻՆ. ԵՍ ՍԵԻԱԴԱ
ԵԻ ՔՈՅՐ⌉ ԻՄ ՇԱՀԱՆԴՈՒԽՏ ԿԱՆԳՆԵՑ-
ԱՔ Զ⌈ԽԱՉՍ Ի ՏԱՊԱՆԻ ԳՐԻԳՈՐԱ ԻՇ-
ԽԱ⌉ՆՈ, ՈՐԴՈՑՆ ՀԶԱԻՐ ԵԻ ՑԱՂԹՈՂ ԻՇ-
ԽԱՆԻ⌉, ՈՐ ԲԱԶՈՒՄ ՔԱՋՈՒԹԵԲ ԵՀԱՐ ԶՏԱ-
ՃԻԿ⌉Ք ԵԻ ԵՐԹԷՐ ՑԵ⌈ՐՈՒՍԱՂԷ⌉Մ, ԶՈՐ ԳԻՏԱՑԻՆ Վ-
··· Ք ԵԻ ԶԹՈՂԻՆ. ՎԱՆ⌊Ա⌋Ց ԴԵԴ ԱՆԲԵՐԴՈ
··· ՍԱՄ ԷՐ. ԵՎ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄ ՈՐ ԱՆԿԱԻ
··· ՌՑԿ (1360) ՏԱՃԻԿ. ԵԻ ԱՆԴՐ ՆԱՀ-
⌈ԱՏԱԿ⌉ԵՑԱԻ ԳՐԻ-
⌈ԳՈՐ, ՈՐՔ⌉ ԵՐԿԻՐ

[1] Տէր-Մովսիսեան Մեսրոպ, *Ազգ. հանդ.*, № XXV, էջ 77։ Նոյնի՝ *Հայկական երեք մեծ վանքեր*, Երուսաղեմ, 1938։

[ՊԱԳԱ]ՆԷՔ ՑԱ
[ՂԱՒԹՍ] ՑՒՇԵՑ
[Է]Ք ՋԳՐԻ]ԳՈՐ ԵՒ Ջ
. . . . Կ . . . . :

Ծանոթ. Խաչքարը երկու կողմերից խիստ ջարդոտված է, ավելի շատ ստորին մասում, հատկապես ձախակողմյան մասը (հյուսիսային կողը)։ Այդ մասում մեր լրացումները հիմնըված են պահված տառերի և պատմական դեմքերին ու դեպքերին վերաբերող փաստերի վրա։

Կոտրված թվականը, առաջին տողի սկզբում, պետք է ցույց տար 1260 կամ մեկ-երկու տարի ավելի։

Գրիգորը և Սևադան պետք է լինեն հայր ու որդի և Խաչենի իշխաններ։ Վարդան պատմիչը այս Սևադային մասնակից է դնում Նիփկերտ-Մուֆարղինի պաշարմանն ու գրավմանը՝ ուր և քաջի մահով սպանվում է. այդպես են հասկացել նաև նորագույն պատմաբանները[1]։ Սակայն Գ. Հովսեփյանը Գրիգորին է համարում սպանված և որդի Սևադայի[2]։ Անկասկած, այս արձանագրությունը կապ ունի վերոհիշյալ դեմքերի և դեպքերի հետ, որքան էլ թերիմաստ, այնուամենայնիվ հաստատում է Գ. Հովսեփյանի տեսակետը։

Հրատ. Ջալալեանց, II, 228 (աղավաղված)։ Տէր-Մովսիսեան, Ազգ. հանդ., XXV, էջ 97։

Լուսանկ. 93.

**444. ԵԿԵՂԵՑՈՒ** *հյուսիսային պատին, ներքուստ, մի քարի վրա, 6 տող.*



Ա[ՍՏՈՒԾՈ]Վ. ԵՍ| ԳԵՍՈՒՄ ՄԻԱԲԱՆԵ|ՑԱ ՍԲ. ՈՒԽՏԻՍ, ՏՎ|Ի :Ա: ԳԻՐՔ. ԱՌԱՋ[Ն]|ՈՐԳ ԱԿՈԲՈՍ [ԵՒ] ԵՂԲԱՐ[ՔՍ ՏՈՒ]|ԻՆ :Ա: ԺԱՄ ՍԲ. ԱԿՈԲԻ ՏԱԻՆԻՆ։

Լուսանկ. 94.

**445. ԵԿԵՂԵՑՈՒ** *հյուսիսային պատին, ներքուստ, մի քարի վրա, որը ներկված է կարմիր գույնով, 6 տող.*



Ա[ՍՏՈՒԾՈ]Վ. ԵՍ ՄԼԵ|Հ ՏՎԻ ՋԻ⌊Մ⌋ ԳՆԱԾ ՀՈՂ|ԵՐՆ Ի ՁԱՓԱՐԻՆ Ի ՍԲ. ՈՒԽՏՍ. ՄԻ|ԱԲԱՆՔՍ ՏՎԻՆ ՍԲ. ԱԿՈԲԻՆ :Բ: ԺԱՄ: :Ա: |ԻՆՁ :Ա: ՓՈՒՓԻՆ. ՈՎ ԽԱՓԱՆ|Է ԿԱՄ ՁՀՈՂԸՆ ԽԼԷ ՆԶՈՎԱԾ ⌊Է⌋ ՑԱՑ.:

*Հրատ. Ջալալեանց, II, 229։ Բարխուդարեանց, 211 (թերի)։*

Լուսանկ. 95.

---

[1] Չամչեան, *III, 257*։ Մանանդյան *III, 234*։ Աճառյան, *Անձնանունների բառարան, Դ, 484*։
[2] Գ. Հովսեփյան, *Խաղբակյանք, I, 94*։

446. ԵԿԵՂԵՑՈՒ հյուսիսային պատի մոտ, արտաքուստ, մի մեծ ժայռաբեկորի վրա, 9 տող.



ԿԱՄԱՒՆ ԱՅ.| ԱՅՍ ԳԻՐ Է ՆՈՐԱԳԻՆԻՍ
ՈՐ| ՏՎԻ ՋՓԱՏԼԱՆԱՆՑ Ի ԿՈՂԹ|ԱՊԱՆ ԻՄ
ՀՈԳՈՅՍ. ԱՌԱՋՆՈՐԴ| ՏՐ. ՈՒԽՏԻՍ ՅՈՀԱՆ-
ՆԷՍ ԵՒ ԷԼ ՄԻԱԲԱՆ|ՔՍ ՏՎԻՆ ԻՆՋ :Բ:
ԱՒՐ ԺԱՄ ՏՐ. ՍԱՐԳՍԻՆ :Ա: ԻՆՋ| ՈՒ :Ա:
ԱՒՐՆ ԽՈՐԻՇԱՀԻ. :ՑԺԸ: ՀԱՑՐԱՊԵՏ|ԱՑ
ՆԶՈՎԱԾ՝ ՈՐ ՀՈՂՆ ԽԼԷ ԿԱՄ ՀԱԿԱ|ՌԱԿԱ:

Հրատ. Ջալալեանց, II, 229։ Տէր-Մովսիսեան, Ազգ. հանդ., XXV, էջ 77։

Լուսանկ. 96.

447. ՆԱԽՈՐԴԻ վերջին կիսատ տողից շարունակված, 3 տող.



ԵՍ ԱՐԱԲԽԱԹՈՒՆ ՍԻԱ| ԱՆ ԵՑԱ| ՏՐ.
ՈՒԽՏԻՍ. ԱՌԱՋՆՈՐԴ ՅՈՀԱՆԷՍ ԵՒ ԵՂ-
ԲԱՐՔՍ ՏՎԻՆ ԻՆՋ :Բ: ԺԱՄ ՀՌՈՄՍԻՄԷԻ
ՏԱԻՆԻՆ:

Հրատ. Տէր-Մովսիսեան, Ազգ. հանդ., XXV, 77։

Լուսանկ. 97.

448. ԵԿԵՂԵՑՈՒ հյուսիսային պատի տակ, արտաքուստ, ժայռի վրա, որի սկզբի մասերը մնացել են պատի մեջ, 6 տող.



⌈ԵՍ ՄԽ⌉ԻԹԱՐ ԳՆ-
⌈ԵՑԻ⌉ ԹԵՂԱԼԱՆԻՆ
. . . ԻՄ ՀՈԳՈՅՍ
⌈ՈՒԽՏ⌉ԻՍ ԵՏՈՒ, ՍՈՔԱ Ի ՏԱՐ-
ԻՆ . . . ԱՒՐ ԺԱՄ ՏՈՒԻՆ ԻՆՋ
⌈ՎԱՐԴԱ⌉ՆԱՆՑ ՏԱԻՆԻՆ:

Լուսանկ. 98.

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՈՐՈՆՔ ԱՅԺՄ ՏԵՂՈՒՄ ՉԿԱՆ

449. Ես Տր. Յոհան|էս և այլ եղբարքս զեկեղեցիս ո|ւրբաթ աւրն հասարակաց հաստա|տեցաք :ՑԺԸ:-ից նզով|ած ով խափանէ:

Հրատ. Տէր-Մովսիսեան, Ազգ. հանդ., XXV, 77։

450. Կամաւն Ա.յ. ես Խոր|իշահ ամուսին Զաքար|ո տուի զիմ անտառանն| Ածածնիս. տէրս և այլ մ|իաբանքս :Բ: աւր պատարագ տուին ինձ աւ|ետե|այց Ածածնի:

Հրատ. Տէր-Մովսիսեան, Ազգ. հանդ., XXV, 78 (որից և առնում ենք), Ջալալեանց, II, 229։

451. ԵԿԵՂԵՑՈՒ մոտի ժայռաբեկորի վրա, 1 տող.

Թւին :ՈՂԶ (1297):

Հրատ. Տէր-Մովսիսեան, Ազգ. հանդ., XXV, 78։

***452. ՆԱԽՈՐԴԻՑ ՆԵՐՔԵՎ 5 տող.***

Թվ. ։ՈԱ։ (1152). Ես ճnrs կանգնեցի զխաչս եղբաւր իմ Զարբազա ի բարեխաւս։

*Հրատ. Տէր-Մովսիսեան, Ազգ. Հանդ., XXV, 78։*

***453. ԵԿԵՂԵՑՈՒ պատի վրա՝***

Ես Մամխիտրուն միաբանեցայ սուրբ ուխտիս. առաջնորդ Յովաննէս և եղբարfս տուին ։Բ։ ժամ։

*Հրատ. Ջալալեանց, II, 229։ Բարխուդարեանց, 211։*

***453ա. ՏԱՊԱՆԱՔԱՐԻ վրա՝***



ՑԱՑՍ Է ՀԱՆԳԻՍՏ|ՑՈՀԱՆԻՍԻ Ա|ՌԱՋՆՈՐԴ
ՄԲ| ՈՒԽՏԻՍ։

Լուսանկ. 99ա

***453բ. ՏԱՊԱՆԱՔԱՐԻ վրա՝***



ԱՑՍ Է ՀԱՆԳԻ|ՍՏ ԲԱՐԷՊԱՇ|Տ ԻՇԽԱՆԻՆ Խ|ՈՍ-
ՏՐՈՎԿԱՑ|ՈՐԴՈՑ ՀԱՍԱ|ՆԱՑ։

Լուսանկ. 99բ.

## 32. ՍՈՖՈՒԼՈՒ ԳՑՈՒՂ — ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ

*Այս գյուղը գտնվում է Մարդակերտի շրջանին կից Ադրբեջանական Աղդամի շրջանի մեջ։ Գյուղի սահմանում են կանգնած այժմ Գյավուր Ղալա կոչվող բերդի և նրա շրջապատում գտնվող բնակավայրի ընդարձակ ավերակները, որոնք հայերը անվանում են Թգրանակերտ, իսկ ադրբեջանցիները՝ Թառնակերտ։ Սրանք Սեբեոսի կողմից հիշատակված Տիգրանակերտ ավանի մնացորդներն են[1]։ Ջալալյանցն[2] ու Բարխուդարյանցն[3]․այնտեղ նկատել են շուկայի, բաղնիքների, եկեղեցիների և այլնի մնացորդներ։ Գյավուր Ղալայի ավերակներից Բաքվի պատմության թանգարան է տեղափոխվել մի գերեզմանաքար։*

---

[1] *«Պատմութիւն Սեբէոսի եպիսկոպոսի ի Հերակլն», Թիֆլիս, 1912, էջ 148, 283,*

[2] Ջալալեանց, II, *344—345,*

[3] Բարխուդարեանց, *էջ 28,*

[4] Մ. Կաղանկատուացի, *Պատմութիւն Աղուանից աշխարհի, Թիֆլիս, 1913, էջ 383. Նույն պատմիչն ունի Տկռակերտ տեղանունը, որը, հավանաբար, Տիգրանակերտի բարբառային ձևն է, Անդ, էջ 343։*